

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 2019 թվականի N ____-Ա

«ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀՅ ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետը և «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն օրենքի 21-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է

1. «ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հՅ հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ «29.210.01962) վերանվանել «Շիրակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (այսուհետ՝ կազմակերպություն):

2. Սահմանել, որ կազմակերպությունը երկրորդ՝ տարածքային մակարդակում երեխայի կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող կազմակերպություն է, որի

- նպատակն իր սպասարկման տարածքի ուսումնական հաստատություններում սովորողների կրթության կազմակերպմանը և կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառմանն աջակցելն է;
- գործունեության առարկան կրթության կազմակերպման ոլորտում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցումն է:

3. Թույլատրել կազմակերպությանն իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

- 1) ուսումնական և մեթոդական գրականության մշակում և հրատարակում;
- 2) դիդակտիկ նյութերի և պարագաների ստեղծում;
- 3) մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում 18-ից բարձր տարիք ունեցող (հանրակրթության մեջ չընդգրկված) անձանց;
- 4) փորձագետ-մասնագետների կողմից մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մատուցում:

4. «Շիրակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «գ», «դ» «ե» և «է» ենթակետերով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

5. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին, սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո,

1) երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի հետհամատեղ ապահովել կազմակերպությանը սեփականության իրավունքով և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող գույքի, ինչպես նաև պարտավորությունների կազմի ճշտման գործընթացը, գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը.

2) երկամսյա ժամկետում հաստատել կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ:

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին ապահովել կազմակերպությունում սովորող աշակերտների հանրակրթական ծրագրով հետագա ուսումնառությունը:

7. Կազմակերպության անվանափոխության հետ կապված պետական գրանցման և կնիքի ձեռք բերման ծախսերը կատարել կազմակերպության միջոցների հաշվին:

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ
ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀՅ ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՋ
ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

«ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ3 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը բխում է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն օրենքի 21-րդ հոդվածի պահանջներից, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N6 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի կատարումն ապահովելու անհրաժեշտությունից:

2. Ընթացիկ իրավիճակը և կարգավորման նպատակը

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2014 թվականի դեկտեմբերի 1-ին ընդունվել է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը (ՀՕ-200-Ն), որով նախատեսվում է հանրակրթության համակարգում անցում կատարել համընդհանուր ներառական կրթության, կիրառելով երեխայի կրթական կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ: Օրենքի կիրարկման արդյունքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մանկավարժահոգեբանական աջակցություն կստանան 3 մակարդակում՝ հանրակրթական դպրոցում, տարածքային և

հանրապետական մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների կողմից:

Օրենքով ամրագրվել է, որ հատուկ դպրոցները պետք է վերակազմակերպվեն տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների, որոնք աջակցություն կտրամադրեն հանրակրթական դպրոցներին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը կազմակերպելու համար:

Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնները որպես երկրորդ մակարդակ պետք է մատուցեն անձի կրթության աջակցության մանկավարժահոգեբանական ծառայություններ (կազմակերպում, համակարգում) և իրականացնեն անձի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի N6 արձանագրային որոշման համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրման գործողությունների պլանի և ժամանակացույցի 23-րդ կետի՝ նախատեսվում է 2019 թվականի ընթացքում Շիրակի մարզում երկու տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հիմնադրում՝ Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների N3 հատուկ (օժանդակ) դպրոցի և Արթիկի N1 հատուկ դպրոցի վերակազմակերպման միջոցով:

«Շիրակի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հիմնադրվում է «ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ3 հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու միջոցով: Հատուկ դպրոցից սովորողների տեղափոխում հանրակրթական դպրոցներ, իսկ ներառական կրթական համակարգում չներառված երեխաների հետագա կրթությունը ապահովվելու է ՀՀ տարածքում գործող հատուկ դպրոցներում (ծնողի ընտրությամբ):

3. Ակնկալվող արդյունքը

Իրավական ակտի ընդունման արդյունքում տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների հիմնադրմամբ նախատեսվում է համընդհանուր ներառական կրթության, յուրաքանչյուր երեխայի կրթության առանձնահատուկ պայմանի կարիքի բացահայտման, գնահատման ու դրան համապատասխան կրթության կազմակերպման արդյունավետ մեխանիզմների ներդրում, ինչը կնպաստի կրթության ոլորտում սահմանված նպատակների իրականացմանը, մասնավորապես, կապահովի հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթություն բոլոր երեխաների համար:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՅ ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հՅ հատուկ (օժանդակ) դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էականա վելացում կամ նվազեցում չի սպասվում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ՄՏԱՎՈՐ ԹԵՐԶԱՐԳԱՑՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՅ ՀԱՏՈՒԿ (ՕԺԱՆԴԱԿ) ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՋ

**ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ
 ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

N/ N	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության և բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1.	ՀՀ ֆինանսների նախարարություն 2019-07-29 N01/8-3/12270-2019	Առարկություններ և առաջարկություններ չկան:		
2.	Պետական գույքի կառավարման կոմիտե 2019-07-254 01/22.22/5096-19	Առարկություններ և առաջարկություններ չկան:		
3.	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն 2019-07-24 01/15.2/9565-19	Առարկություններ և առաջարկություններ չկան:		
4.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 2019թ.-07-24 ԶԲ/ԳԳ-2-1/13327-19	Առարկություններ և առաջարկություններ չկան:		
5.	ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտե 2019-07-18 ՍՊ/5674	Առարկություններ և առաջարկություններ չկան:		

4.	<p>ՀՀ Շիրակի մարզպետարան 2019-07-24 01/4/06079-2019</p>	<p>Առաջարկություն է</p> <p>1. ՀՀ Շիրակի մարզի դպրոցների թվաքանակից, աշխարհագրական դիրքից և բնակլիմայական պայմաններից ելնելով հնարավոր չէ դպրոցներին սպասարկել երկու կենտրոնների միջոցով: Հատուկ դպրոցներից սովորողների տեղափոխումը հանրակրթական դպրոցներ ծնողների համար առաջացնում է մի շարք դժվարություններ.</p>	<p>1.2ի ընդունվում</p>	<p>1. 1.1 Շիրակի մարզում 2 կենտրոն ստեղծելը բխում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի (<O-200-Ն) 21-րդ հոդվածի 1.1) ենթակետի պահանջներից, այն է՝ Հայաստանի Հանրապետության յուրաքանչյուր մարզում գործող առնվազն մեկ, Երևան քաղաքում՝ առնվազն չորս հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն վերակազմակերպվում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի: Քանի որ Շիրակի մարզում գործում է ընդամենը 2 հատուկ դպրոց, ապա այս պահին հնարավոր մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոնները 2-ն են:</p>
----	---	---	------------------------	---

		<p>պայմանավորված՝ երեխայի բնակության համայնքում ծառայություններ ի, հասանելի տրանսպորտային միջոցի բացակայության, ծնողի սոցիալ-տնտեսական վատ վիճակի, խնդիրներով:</p>	<p>Կենտրոնների գործարկումից հետո անհրաժեշտության դեպքում հնարավոր է մասնաճյուղերի ստեղծման հարցը քննարկել:</p> <p>1.2 Դիտարկման 2 մասով ներկայացված անհանգստությունը չի բխում ներառման տրամաբանությունից, տարածքային կառավարման մարմինները առաջնորդվելով երեխաների լավագույն շահով, պետք է ստեղծեն ենթակառուցվածքներ, երեխաների ընտանիքում ապրելու իրավունքը իրացնելու համար:</p> <p>2. Նշված դիտարկումը ևս չի բխում երեխաների իրավունքներից, <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքում Մանկավարժահոգեբանական տարածքային կենտրոններում հանրակրթության կազմակերպման գործառույթ նախատեսված չէ: Իսկ նշված <<նեղ մասնագետները>> համաձայն կենտրոնների</p>
--	--	--	---

		<p>2. Խորը և ծանր աստիճանի զուգորդված հաշմանդամությ ուն ունեցող երեխաների ուսումնառություն ը և խնամքը</p>	<p>2.2ի ընդունվում</p>	<p>գործառույթների պետք է իրենց ծառայությունները մատուցեն հանրակրթական դպրոցներում: 3. Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 13 ապրիլի 2017 թ. N370-Ն հրամանով հաստատված «Կրթության կազմակերպմ անմանկավարժահոգեբա նական աջակցության ծառայությունների տրամա դրման կարգ»-ի երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը կատարվում է երեխայի բնական միջավայ րում՝ դպրոցում, մանկապարտեզում, ընտանիքում: Երեխայի Գնահատման գո րծընթացն իրականացվում է կրթական յուրաքանչյուր աստիճանի առաջին տարո ւմ (առաջին, հինգերորդ և տասներորդ ասարաններում), ինչպես նաև՝ երբ երեխայի մ ոտ, ուսումնառության ընթացք ում, արտակարգ իրավիճակն ե րով պայմանավորված՝ նկ ատվում են կայուն դժվարու</p>
--	--	---	----------------------------	---

		<p>շարունակել նորաստեղծ կենտրոններում, որտեղ ապահովված է նեղ մասնագետների համալրվածությունը և շենքային պամանները:</p> <p>3.</p> <p>Հատուկ և ներառական կրթություն իրականացնող դպրոցներում սովորող ոչ բոլոր աշակերտների կրթության առանձնահատուկ պայմանի կարիքն է գնահատված նոր՝ ֆունկցիոնալ դասակարգումով, որը իրատեսական չէ</p>	<p>3.2ի ընդունվում</p>	<p>թյուններ: Գնահատումը շարունակական գործընթաց է և անցումային շրջան սահմանելը նպատակահարմար չէ:</p>
--	--	--	------------------------	---

		<p>իրականացնել մինչև 2019 թվականի սեպտեմբերի 1-ը, ուստի առաջարկում ենք սահմանել անցումային շրջան մինչև ընթացիկ տարվա վերջը:</p> <p>Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ Շիրակի մազպետարանը մոբիլիզացրել է ծառայություններ մատուցող բոլոր կառույցների /պետական և հասարակական/ ռեսուրսները հնարավոր ռիսկերից խուսափելու նպատակով:</p> <p>Այնուամենայնիվ վերակազմակերպ</p>		
--	--	--	--	--

		<p>պման գործընթացին սահուն անցման ռիսկայնության ցուցանիշը դեռևս մնում է բարձր:</p>		
<p>ՀՀ արդարադատության նախարարություն 2019-08-12 01/27.1/18145-2019</p>	<p>Առաջարկում է 1. Նախագծի նախաբանում «հողվածք» բառն անհրաժեշտ է փոխարինել «հողվածի 2-րդ կետը» բառերով՝ համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետությ ան օրենքի 17-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջների:</p> <p>Միաժամանակ նախագծի</p>	<p>1.Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>1.Նախագծում առաջարկին համապատասխան կատարվել է լրացում:</p> <p>Նախագծի նախաբանում առաջարկին համապատասխան կատարվել է լրացում:</p>	

		<p>նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Հանրակրթությ ան մասին» Հայաստանի Հանրապետությ ան օրենքում լրացումներ և փոփոխություննե ր կատարելու մասին» Հայաստանի Հանրապետությ ան 2014 թվականի դեկտեմբերի 1-ի ՀՕ-200-Ն օրենքի 21-րդ հոդվածին՝ համաձայն նախագծին կից հիմնավորման և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետությ</p>	<p>2.Ընդունվել է</p> <p>3.Ընդունվել է</p>	<p>2.Նախագծի 1-ին կետում առաջարկին համապատասխան կատարվել է թվերի փոփոխություն:</p> <p>3.Նախագծի 4-րդ կետում առաջարկին համապատասխան կատարվել է փոփոխություն:</p>
--	--	---	---	---

		<p>ան օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների:</p> <p>2.</p> <p>Նախագծի 1-ին կետում «16.210.00860» թվերն անհրաժեշտ է փոխարինել «29.210.01962» թվերով՝ համաձայն ՀՀ արդարադատության նախարարության և իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության գրանցամատյանի տվյալների:</p> <p>3.</p> <p>Նախագծի 4-րդ կետում «մասի» բառն</p>		
--	--	---	--	--

		<p>անհրաժեշտ է փոխարինել «կետի» բառով՝ համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների:</p>		
--	--	--	--	--